

Մասնագիտության նկարագիրը	
Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	Բուժքույրական գործ /բուժքույր/
I. Դերը	Բուժքույրը տարբեր սեփականության ձևերի առողջապահական, գիտահետազոտական, բնակչության սոցիալական պաշտպանության և բուժծառայությունների հիմնարկներում իրականացնում է առողջության պահպանման և ամրապնդմանը ուղղված գործունեություն:
II. Խնդիրների բնագավառները	
<ol style="list-style-type: none"> 1. բնակչության առողջության պահպանումը և ամրապնդումը 2. հիվանդությունների կանխարգելում 3. ախտորոշիչ և բուժական նշանակումների կատարում 4. հիվանդների խնամք 5. առողջության վերականգնում 	
Խնդիրների բնագավառ 1. Բնակչության առողջության պահպանումը և ամրապնդումը	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • իրականացնում է բնակչության տարբեր սեռատարիքային խմբերի հիգիենայի, առողջ ապրելակերպի ուսուցում, • իրականացնում է համագործակցություն առողջապահական, կրթական, սոցիալական, ինչպես նաև գործող այլ ծառայությունների հետ, • իրականացնում է սպասարկվող բնակչության անհատական հաշվառում, բժշկասոցիալական ծառայության կարիք ունեցող և ռիսկի խմբերին պատկանող անձանց հաշվառում և խնամքի ապահովում, • իրականացնում է ազգաբնակչության վնասվածքների, թունավորումների, սուր վիճակների և դժբախտ պատահարների ժամանակ միմյանց օգնության ցուցաբերման տարրերի ուսուցում,
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • իրականացված է բնակչության տարբեր սեռատարիքային խմբերի հիգիենայի, առողջ ապրելակերպի ուսուցում, • իրականացված է համագործակցություն առողջապահական, կրթական, սոցիալական, ինչպես նաև գործող այլ ծառայությունների հետ,

	<ul style="list-style-type: none"> • իրականացված է սպասարկվող բնակչության անհատական հաշվառումը, բժշկասոցիալական ծառայության կարիք ունեցող և ռիսկի խմբերին պատկանող անձանց հաշվառումը և խնամքի ապահովումը, • իրականացված է ազգաբնակչության՝ վնասվածքների, թունավորումների, սուր վիճակների և դժբախտ պատահարների ժամանակ միմյանց օգնության ցուցաբերման տարերի ուսուցումը:
<p>Խնդիրների բնագավառ 2. Հիվանդությունների կանխարգելում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • իրականացնում է բնակչության մինչ բժշկական կանխարգելիչ հետազոտություն, • իրականացնում է առողջության պահպանման և ամրապնդման համար առանձին անհատների, ընտանիքների և բնակչության խմբերի կրթմանը ու ուսուցմանն ուղղված կանխարգելման համալիր ծրագրերի պլանավորում և գնահատում, • հետևում է մանկան ֆիզիկական և հոգեկան զարգացման ընթացքին • իրականացնում է երեխայի նկատմամբ պատրոնաժ հսկողություն, • իրականացնում է կանխարգելիչ պատվաստումների օրացուցային պլանի կազմումը, • իրականացնում է ինֆեկցիոն հսկողության պահանջների կատարում, հիվանդների և բուժանձնակազմի ինֆեկցիոն անվտանգության պահպանում, • իրականացնում է բնակչության, հիվանդների, տուժածների, աղետների բժշկության ծառայության բուժանձնակազմի պաշտպանությանը վերաբերող միջոցառումների անցկացում
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • իրականացված է բնակչության մինչբժշկական կանխարգելիչ հետազոտությունը, • առողջության պահպանման և ամրապնդման համար

	<p>առանձին անհատների, ընտանիքների և բնակչության խմբերի կրթմանը ու ուսուցմանն ուղղված կանխարգելման համալիր ծրագրերը պլանավորված և գնահատված են,</p> <ul style="list-style-type: none"> մանկան ֆիզիկական և հոգեկան զարգացման ընթացքը վերցված է հսկողության տակ, իրականացված է երեխայի նկատմամբ պատրոնաժ հսկողություն, կկանխարգելիչ պատվաստումների օրացուցային պլանը կազմված է, ինֆեկցիոն հսկողության պահանջները կատարված են, հիվանդների և բուժանձնակազմի ինֆեկցիոն անվտանգությունը պահպանված է, բնակչության, հիվանդների, տուժածների, աղետների բժշկության ծառայության բուժանձնակազմի պաշտպանությանը վերաբերող միջոցառումները անցկացված են
<p>Խնդիրների բնագավառ 3. Բժշկի ախտորոշիչ և բուժական նշանակումների կատարում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> իրականացնում է հիվանդների՝ լաբորատոր և գործիքային հետազոտությունների, վիրահատությունների նախապատրաստում, կատարում է բժշկի կողմից նշանակված կանխարգելիչ, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումներ, իրականացնում է ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաների հիմնական տեսակների կատարում, հոգեթերապիայի տարրերի օգտագործում, բժշկի նշանակած դիետայի պահպանման նկատմամբ հսկողություն, անցկացվող միջոցառումների արդյունավետության գնահատում, իրականացնում է դեղամիջոցների ստացման, պահպանման և օգտագործման դեղագործական կարգի պահպանման նկատմամբ հսկողություն, իրականացնում է նյութերի հավաքում, տեղափոխում

	<p>և պահպանում մանրէաբանական հետազոտության համար,</p> <ul style="list-style-type: none"> • իրականացնում է կոնկրետ հիվանդի մոտ դեղամիջոցների արդյունավետության գնահատում, դեղորայքային թունավորման ժամանակ նախաբժշկական օգնության ցուցաբերում, • վարում է բժշկական փաստաթղթերը, • իրականացնում է քույրական միջամտությունների կատարում, • նախապատրաստում է գործիքները բժշկի կողմից բարդ միջամտությունների կատարման ժամանակ :
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • հիվանդների նախապատրաստված են լաբորատոր և գործիքային հետազոտությունների, վիրահատությունների • կողմից նշանակված կանխարգելիչ, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումները կատարված են • ֆիզիոթերապևտիկ պրոցեդուրաների հիմնական տեսակները կատարված են, բժշկի նշանակած դիետայի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացված է, անցկացվող միջոցառումների արդյունավետությունը գնահատված է • դեղամիջոցների ստացման, պահպանման և օգտագործման դեղագործական կարգի պահպանման նկատմամբ հսկողությունն իրականացված է • մանրէաբանական հետազոտության համար նյութերը հավաքված են տեղափոխված և պահպանված • կոնկրետ հիվանդի մոտ դեղամիջոցների արդյունավետության գնահատված է, դեղորայքային թունավորման ժամանակ նախաբժշկական օգնությունը ցուցաբերված է • բժշկական փաստաթղթերի վարում • քույրական միջամտությունները կատարված են • գործիքները պատրաստ են բժշկի կողմից բարդ

	միջամտությունների կատարմանը
Խնդիրների քննազավառ 4. Հիվանդների խնամք	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • իրականացնում է քույրական գործընթացի փուլերը և փաստաթղթերով հիմնավորում հիվանդների խնամքի ժամանակ, • իրականացնում և կազմակերպում է ստացիոնար և տնային պայմաններում քույրական խնամք, • իրականացնում է հիվանդների համալիր խնամք • իրականացնում է ամոքիչ բժշկության և մահացող հիվանդի խնամք:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • քույրական գործընթացի փուլերը, իրականացված են և փաստաթղթերով հիմնավորված հիվանդների խնամքի ժամանակ, • ստացիոնար և տնային պայմաններում քույրական խնամքը իրականացված և կազմակերպված է, • իրականացված է հիվանդների համալիր խնամքը, • իրականացված է ամոքիչ բժշկության և մահացող հիվանդի խնամք
Խնդիրների քննազավառ 5. Առողջության վերականգնում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • իրականացնում է վերականգնողական բուժման կոմպլեքս միջոցառումներ, • իրականացնում է ֆիզոթերապևտիկ միջամտություններ:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> • վերականգնողական բուժման կոմպլեքս միջոցառումները իրականացված են, • ֆիզոթերապևտիկ միջամտությունները իրականացված են:
III. Պատասխանատվությունը /անմիջական պատասխանատվության շրջանակ/	<p>Բուժքույրը պատասխանատու է հիվանդների և բուժանձնակազմի ինֆեկցիոն անվտանգության պահպանման, բժշկի կողմից նշանակված կանխարգելիչ, բուժիչ և ախտորոշիչ միջոցառումների, մանրէաբանական հետազոտության համար նյութերի հավաքման, տեղափոխման և պահպանման, դեղորայքային թունավորման ժամանակ նախաբժշկական օգնության ցուցաբերման, բժշկական փաստաթղթերի վարման,</p>

	<p>քույրական միջամտությունների կատարման, բժշկի կողմից բարդ միջամտությունների կատարման ժամանակ գործիքների նախապատրաստման, ստացիոնար և տնային պայմաններում քույրական խնամքի համար:</p>
<p>IV. Լեզուները</p>	<p>Չայերեն (լավ) Ռուսերեն (բավարար) Անգլերեն (բավարար) Լատիներեն (անատոմիական, կլինիկական և մանկաբարձագինեկոլոգիական սահմանումներ և տերմիններ)</p>
<p>V. Համակարգիչը</p>	<ul style="list-style-type: none"> • Տեքստերի հավաքում՝ բավարար, • աղյուսակների կազմում՝ բավարար, • համացանցից օգտվելու կարողություն՝ լավ:
<p>VI. Գիտելիքները</p>	<p>Պետք է իմանա</p> <p>Մարդու անատոմիա, ֆիզիոլոգիա՝ պաթոլոգիայի հիմունքներով, մարդու կենսագործունեության փուլերը, քույրական գործի հիմունքները, մանկարձույթի հիմունքներ, գինեկոլոգիայի հիմունքներ, մանկաբուժություն, վիրաբուժություն, ընդհանուր և բժշկական հոգեբանություն, ընդհանուր դեղաբանություն, պետության կողմից երաշխավորված բժշկական օգնության և սպասարկման ոլորտը կարգավորող չափորոշիչները, առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրական ակտեր, մասնագիտական գործունեության բնագավառում աշխատողների իրավունքներն ու պարտականությունները, աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորման վերաբերյալ օրենսդրական ակտերի և նորմատիվ այլ փաստաթղթերի դրույթները:</p>
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Բուժքույրը պետք է կարողանա՝</p> <ul style="list-style-type: none"> • ցուցաբերել անհապաղ նախաբժշկական քուժքույրական օգնություն, • վերլուծել ստեղծված իրավիճակը և որոշումներ կայացնել սեփական մասնագիտության լիազորությունների և իրավասությունների սահմաններում,

	<ul style="list-style-type: none"> • տիրապետել հաղորդակցման հմտություններին, • մասնակցել և կատարել ստացիոնար և պոլիկլինիկական պայմաններում բժշկի նշանակման և սեփական մասնագիտական իրավասության և լիազորության սահմաններում տարբեր սեռատարիքային խմբերի պացիենտներին ախտորոշիչ, բուժական, վերակենդանացման, վերականգնողական, կանխարգելիչ, բուժառողջարարական, սանիտարալուսավորչական միջոցառումներ, , • իրականացնել և փաստաթղթերով հիմնավորել քույրական գործընթացի փուլերը հիվանդների խնամքի ժամանակ, • ստացիոնարի և տնային պայմաններում իրականացնել և կազմակերպել քույրական խնամք, • իրականացնել և փաստաթղթերով հիմնավորել քույրական գործընթացի հիմնական փուլերը անբուժելի հիվանդներին ամոքիչ քույրական օգնություն ցուցաբերելիս, • դեղորայքային թունավորման ժամանակ ցուցաբերել նախաբժշկական օգնություն, • նախապատրաստել գործիքներ և օգնել բժշկին բարդ միջամտությունների կատարման ժամանակ, • նախապատրաստել հիվանդին ախտորոշիչ հետազոտությունների և շտապ վիրահատությունների • տիրապետել սանիտարական լուսաբանման մեթոդներին և միջոցներին, • հետևել դեղամիջոցների ստացման, պահպանման և օգտագործման կարգին, • վարել բժշկական փաստաթղթեր, • կատարել ինֆեկցիոն հսկողության պահանջները, • արտակարգ իրավիճակներում ցուցաբերել նախաբժշկական օգնություն, • կատարել նյութերի հավաքում, տեղափոխում և պահպանում մանրէաբանական հետազոտության համար,
--	---

	<ul style="list-style-type: none"> • կարողանա կիրառել Նոր տեղեկատվական տեխնոլոգիական մեթոդներ, հնարքներ և միջոցներ, • բարձրացնել գիտելիքների, կարողությունների մասնագիտական մակարդակը
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> • Պարտաճանաչություն, • բանիմացություն • ճշտապահություն, • կառավարել սթրեսը և ժամանակը, առաջացած խնդիրներին և կոնֆլիկտներին տալ համապատասխան լուծումներ, • կարգապահություն • կարողանալ նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսությունները և քննարկումները, • գաղտնապահություն • համբերատարություն, • մարդասիրություն, • իրավասություն